

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<<ՀՀ ԿԳՄՄՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում

Անցկացման վայրը՝ ՄԱՐՏՈՒՆԻ

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբուրջյան

Ուսուցիչ՝ Հասմիկ Միրզոյան

Դպրոց՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի կրթահամալիր

Մարտունի 2022թ.

Բովանդակություն

1. Ներածություն	3
2. Գրական ակնարկ	5
3. Փորձարարական հետազոտություն.....	9
3.1-Խմբի նկարագիրը.....	9
3.2-Փորձարարական դասեր.....	10
3.2.1-Փորձարարական դաս-1.....	10
3.2.2-Փորձարարական դաս-2.....	11
4. Եզրակացություն.....	12
5. Օգտագործած գրականության ցանկ.....	12
6. Հավելված.....	14
Դասապլան-1.....	14
Դասապլան-2.....	18

1. Ներածություն

Անուրանալի է ուսուցչի դերը հանրակրթական դպրոցում, հատկապես կրթության բովանդակության և մեթոդների կատարելագործման, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման, մանկավարժական գործընթացին ստեղծագործական ուղղվածություն տալու գործում:

Մովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացման գործընթացում կարևորվում է նաև ուսուցչի հետազոտական գործունեությունը, որի կարևոր բաղադրիչը նրա ստեղծագործական որոնումների ակտիվացման խնդիրն է:

Չափազանց կարևոր է, որ յուրաքանչյուր ուսուցիչ խոր զբաղվի ինքնակրթությամբ, ինքնազարգացմամբ, որոնք նրա վարպետության կատարելագործման լավագույն ուղիներն են: Նա, ուսումնասիրելով իր մասնագիտության վերաբերյալ լույս տեսած գիտական գրականությունը, հոդվածները, նորությունները, բարձրացնում է պրոֆեսիոնալ և մասնագիտական մակարդակը, ուսումնասիրում է նաև նորարար ուսուցիչների առաջավոր փորձը և վերցնելով այն անհրաժեշտը և կարևորը, որը նրան հարկավոր է իր հետագա աշխատանքում օգտագործելու համար: Ինչպես նկատում են մեծ մանկավարժները՝ ոչ մի առաջավոր փորձ չի կարելի ամբողջությամբ վերցնել և ներդնել:

Ուսուցչի մանկավարժական վարպետությունը նրանում է, որ նա կարողանում է հենց դասի ժամանակ բոլոր աշակերտներին սովորեցնել, զարգացնել՝ միտքը, հղկել նրանց ունեցած բարոյական և գեղագիտական որակները, բացել նրանց համար ուղիղ ճանապարհ դեպի գիտելիքների «աշխարհ»: Մեր կարծիքով ուսուցչի մանկավարժական տաղանդը նրա օժտվածության, իր առարկայի խոր իմացության և բարձր աշխատասիրության միասնության մեջ է:

Ուսուցչի մասնագիտությունն ամենասիրված և ամենապատվավոր մասնագիտությունն է, որն իրականացնում է ժամանակների սերունդների կապը, և դրանով էլ նրա աշխատանքը դառնում է հրապուրիչ, ստեղծագործական: Այժմ ևս պահանջվում են այնպիսի ուսուցիչներ, որ կարողանան ստեղծագործաբար լուծել իրենց առջև դրված մանկավարժական բարդ խնդիրները, որոնց հիմքում ընկած են ստեղծագործական

հոգեբանության դրույթները:

Հետազոտական գործունեությունը որպես մանկավարժական գործունեության բաղադրիչ վերաբերում է ուսուցչի ստեղծագործական գործունեության գիտական տեսակին, արդյունքին: Է

Հետազոտական գործունեություն իրականացնելու համար ուսուցչին անհրաժեշտ են համապատասխան կարողություններ՝ դրսևորված հմտություններով: Քիմիայի ուսուցչի առարկայական և մասնագիտական հմտությունների կատարելագործման համար, որքան կարևոր է գիտական հետազոտական աշխատանքը, նույնքան էլ կարևոր է դասարանի հետ անցկացվող գործնական հետազոտական աշխատանքը՝ առարկայի յուրացման մակարդակը պարզելու համար: Դպրոցը կոչված է աշակերտներին տալու քիմիայից որոշակի գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են մարդու առօրեական կյանքում: Քիմիան իր ուրույն տեղն ունի բնական գիտությունների շարքում:

– Քիմիան գիտություն է նյութերի հատկությունների, դրանց փոխարկումների և փոխարկումներին ուղեկցող երևույթների մասին:

– Քիմիան զբաղվում է մեզ շրջապատող աշխարհի նյութերի ուսումնասիրմամբ:

– Քիմիան սերտ կապի մեջ է բնական գիտությունների՝ ֆիզիկայի, կենսաբանության, աշխարհագրության, մաթեմատիկայի հետ և այլն:

2. Գրական ակնարկ

Քիմիան, լինելով բնական գիտությունների շարքում, օգնում է լուծելու կյանքի առօրյա խնդիրներ, նպաստում մարդու բարոյական վարքի դաստիարակմանը շրջակա միջավայրի նկատմամբ, տալիս անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ առօրյայում կիրառելու համար:

Քիմիայի՝ որպես դասավանդվող առարկայի բովանդակային մեծ ծավալը, առանձին դեպքում նաև ոչ մատչելի տերմինաբանությունն ու անվերջ թվացող բանաձևերը շատ դեպքերում այն դարձնում են ոչ այնքան սիրելի, ուստի առաջանում է ուսումնական գործընթացը հետաքրքիր ու բովանդակալից կազմակերպելու խնդիրը, որպեսզի սովորողները ընկալեն դասընթացը և ստանան գիտելիքներ, ձեռք բերեն հմտություններ, որոնք հետագայում անհրաժեշտ կլինեն՝ անկախ սովորողի հետագա մասնագիտությունից:

Քիմիան փորձարարական գիտություն է:Նրա միջոցով ճանաչում են նյութերը,դրանց կառուցվածքը,հատկանիշները: Փորձերի միջոցով թափանցում են նյութերի զարմանահրաշ աշխարհ, փորձի տվյալների հիման վրա եզրահանգումներ են կատարում:Փորձերի միջոցով հետաքրքրություն է առաջանում առարկայի նկատմամբ, աշակերտները առարկան կապում են կյանքի, կենցաղի, արվեստի ու գեղեցիկի հետ: Փորձի միջոցով աշակերտները ձեռք են բերում զգուշություն՝ պահպանելով անվտանգության կանոնները, խորացնում են գիտելիքները, համեմատում, համադրում, ընդհանրացնում են կատարած, տեսածը: Փորձ կատարած աշակերտի մոտ ուժեղանում է մտապահելու, ընկալման, ուշադրության կենտրոնացման,ինքնուրույն մտածողության գործունեության ունակությունը:

Քիմիան բնական գիտություն է, որը ուսումնասիրում է նյութերի բաղադրությունը, քիմիական կառուցվածքը, հատկություններն ու փոխարկումները: Քիմիան էական նշանակություն ունի մեր կյանքում և երբեմն բնութագրվում է որպես «կենտրոնական գիտություն», քանի որ այն միմյանց հետ է կապում այլ գիտություններ՝ կենսաբանություն, ֆիզիկա, բժշկություն, երկրաբանություն և բնապահպանություն: Անգնահատելի է քիմիայի դերը բժշկության, գյուղատնտեսության, սննդի արդյունաբերության, բնապահպանության և էներգետիկայի հիմնախնդիրների լուծման գործում: «Քիմիա» առարկայի ուսումնասիրությունը աշակերտին հնարավորություն է

տալիս հասկանալու քիմիայի հիմնական սկզբունքները, նյութերի կառուցվածքի և հատկությունների ուսումնասիրման գիտական մեթոդները, քիմիական ռեակցիաների ընթացքում տեղի ունեցող ջերմային երևույթները և քիմիական տերմինաբանությունը, ինչը նպաստում է վերլուծական, քննական և ստեղծագործական մտածողությամբ անհատի ձևավորմանը: Քիմիայի դասընթացի յուրացման ընթացքում աշակերտը ձեռք կբերի քիմիական գրագիտություն, նյութերի հետ անվտանգ վարվելու գործնական հմտություններ, կտվորի ինչպես պետք է պլանավորել և իրականացնել քիմիական հետազոտությունը, հավաքագրել, մշակել և վերլուծել ստացված փորձնական տվյալները, կատարել հիմնավորված եզրակացություններ: Նյութերի հատկությունների մասին ստացած քիմիական գիտելիքները կօգնեն սովորողին հասկանալու բալանսավորված սննդակարգի և առողջ ապրելակերպի կարևորությունը մարդու արողջության պահպանման համար: «Քիմիա» առարկայի գլխավոր նպատակը սովորողների մոտ քիմիական գիտելիքների համակարգի և դրանց կիրառման հմտությունների ձևավորումն է, որպեսզի նրանք դառնան ժամանակակից արագ փոփոխվող, հասարակության լիարժեք անդամներ և նախապատրաստվեն քիմիային առընչվող հետագա ուսումնասիրությանը կամ կարիերային: «Քիմիա» առարկան գլխավորապես նպատակ է հետապնդում սովորողներին հնարավորություն տալ.

– ձևավորել և կիրառել քիմիական գիտելիք, հասկանալու գիտության բնույթը քիմիային առընչվող համատեքստում և գնահատել քիմիայի և մյուս գիտությունների միջև գոյություն ունեցող կապերը,

– զարգացնել գիտական հետազոտություններ կատարել ունակությունները, ստեղծարար և քննականորեն մտածել և քիմիայի համատեքստում անհատապես կամ խմբերով խնդիրներ լուծել կարողությունը,

– հասկանալ քիմիական տերմինաբանությունը և հաղորդակցվել՝ ներկայացնելով քիմիային առընչվող հարցերի վերաբերյալ գաղափարներ և տեսակետներ,

– զարգացնել բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանական հարցերի վերաբերյալ պատասխանատու քաղաքացու վերաբերմունք:

Քիմիան ուսումնասիրելու, դասերն անցկացնելու համար կարելի է կիրառել ինտերակտիվ, օնլայն և այլ ժամանակակից մեթոդները զուգակցելով դասական

մեթոդների ու տեխնոլոգիաների հետ:

Քիմիայի դասավանդման ընթացքում սովորողների կողմից դասանյութի ընկալման և առարկայի սկզբունքների տիրապետումը ստուգելու արդյունավոր մեթոդներից մեկը «Տարբերակված ուսուցման» մեթոդն է:

Տարբերակված ուսուցման նպատակները.

Տարբերակված ուսուցման ժամանակ յուրաքանչյուր դասարան կարելի է բաժանել 3 տիպաբանական՝ A, B, C խմբերի:

A խմբում սովորում են «խմբում՝ լավ գիտելիքներ և առաջադիություն ունեցողները խմբի համար տարբերակված ուսուցումը ունի հետևյալ նպատակները.

- _ Գիտելիքների խորացում
- _ Բարդ խնդիրներ լուծելու հմտության զարգացում

B խմբում սովորում են բավարար գիտելիքներ ունեցողները, իսկ C խմբում՝ նվազագույն շեմը չհաղթահարողները: Վերջիններիս համար տարբերակված ուսուցման նպատակներն են.

- _ Կրկնություն, նոր թեմայի յուրացում՝ հաջորդ աշխատանքը գրելու համար
- _ Աշխատանքային հմտությունների զարգացում, ինքնուրույն աշխատելու հնարավորություն
- _ Վերարտադրել սովորած նյութը կամ լուծված խնդիրը
- _ Նվազագույն գիտելիքների յուրացման շեմը ներկայացնելու հմտություն

Տարբերակված ուսուցման դրական և բացասական կողմերը.

Տարբերակված ուսուցումը ունի իր դրական և բացասական կողմերը: Աշակերտների տարբերակումը ուժեղ, միջին և թույլ առաջադիությունների ունի ոչ միայն առավելություններ, այլ նաև թերություններ: Ծանր ուսումնական նյութերը խթանում են շնորհաշատ աշակերտներին, իսկ այն աշակերտները, որոնք ունեն դանդաղ զարգացման տեմպ. այս պարագայում սովորելու ցանկությունը կորցնում է, և ուսումնառությունը դառնում է ծանր պարտականություն:

Միննույն դասարանում տարբեր առաջադիմության տեր աշակերտների հետ աշխատելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի.

_ Անցյալ տարի տվյալ առարկան նու՞յն թե տարբեր դասարաններում են սովորել

_ Արդյո՞ք շատ են բացակայել դասերից

_ Աշխատում են նույն թե տարբեր զուգընկերների հետ

Տարբերակված ուսուցման ժամանակ, երբ ուսուցիչը ուշադրության կենտրոնում է պահում միջին առաջադիմության տեր աշակերտներին՝ ուժեղների նկատմամբ կիրառելով տարբերակված ուսուցում, անհաղթահարելի խնդիր է առաջանում թույլերի նկատմամբ:

Այս հայեցակարգից ելնելով՝ շատ մանկավարժներ սովորողների մտավոր ունակությունները բացահայտելու համար դիմում են թեստերի օգնությանը: 20-րդ դարում առաջին անգամ թեստեր մշակել են հոգեբան Ա. Բինեն և բժիշկ Տ. Միմիոնը, որոնք մշակել են նաև հատուկ սանդղակ՝ առաջադիմությունը չափելու նպատակով:

3. Փորձարարական հետազոտություն

3.1-Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքն անցկացրել եմ Գեղարքունիքի Վարդենիկի կրթահամալիրի 10-րդ դասարանում

Քանի որ այս դասարանի որոշ աշակերտներ ունեին ցածր առաջադիմություն և պասիվ դրսևորում դասապրոցեսների ընթացքում, այդ պատճառով ես որոշեցի կիրառել «Տարբերակված ուսուցման» մեթոդը, որպեսզի մեծանա աշակերտների հետաքրքրությունն ու մոտիվացիան դասապրոցեսներին մասնակցելու՝ այսինքն կարծիքներ հայտնելու, համեմատելու, վերլուծելու, իրենց մտքերն ազատ ու հստակ արտահայտելու, ինքնուրույնություն ձեռք բերելու վերաբերյալ:

Այս դասարանում սովորում են 15 աշակերտ՝ 8 աղջիկ և 7 տղա, որոնք ունեն տարբեր ընդունակություններ:

Քիմիա առարկան անցնում են շաբաթական 2 ժամ, այն դասացուցակում տեղադրված է 5-րդ ժամին:

Այս դասարանի հիմնական խնդիրները.

- _ Դասը բանավոր պատասխանել
- _ Լուծել քիմիական խնդիրներ(Քիմիա-10. դասագրքի՝ էջ)
- _ Կատարել փորձեր

3.2-Փորձարարական դասեր

3.2.1-Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը՝ «Հալոգենների քիմիական հատկությունները» թեման է (տե՛ս դասապլան 1, էջ՝ 14):

Քանի որ ընտրված է «Տարբերակցված ուսուցման» մեթոդը, աշակերտներին բաժանեցի երեք խմբի՝ բարձր առաջադիմություն ունեցող սովորողները բանավոր պատասխանեցին դասը, գրատախտակին գրեցին պահանջվող բանաձևերն ու լուծեցին համապատասխան խնդիրներ.(դասագրքի-էջ. 122. ԽՆ դ ի ը -4,5);

Միջին առաջադիմություն ունեցողներին, բաժանեցի թեմայի վերաբերյալ հայտորոշիչ թեստեր; Թույլ առաջադիմություն ունեցողներին հանձնարարեցի դասագրքի(էջ՝122 վարժ. 1,2,3) կատարել տրված հարցերն ու առաջադրանքները, ինչը կատարել էին որոշակի սխալներով, որոնք ուղղեցին իմ օգնությամբ:

Կատարեցինք քիմիական փորձ,փորփը կատարելու համար մեզ անհրաժեշտ է՝լաբորատոր կալան,որի վրա տեղադրված է տափակահատակ կոլբ,որի մեջ լցրեցինք ցինկի կտորներ և ցինկի կտորների վրա լցրեցինք աղաթթու;Արդյունքում մենք ստացանք ջրածին գազ ,որը հայտնաբերեցինք վառվող մարխի միջոցով;Աշակերտներին շատ հետաքրքիր է փորձը ամբողջությամբ; Փրձի ամբողջ ընթացքում սովորողներին իմ ուշադրության կենտրոնում էի պահում և ուղղություն ցույց տալիս:

Այնուհետև բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները համամեմատականներ անցկացրեցին նախորդ դասի և մոր դասի միջև;

Միջառարկայական կապ ստեղծվեց ֆիզիկաայի, կենսաբանության մաթեմատիկայի հետ: Աշակերտների մոտիվացիան բարձրանում էր դասին ակտիվ մասնակցելու, փորձ կատարելու, գիտելիքներ ձեռք բերելու առումով: Ամբողջ դասարանը ներգրավված էր դասապրոցեսին:

Վերը նշվածից հետո ծանոթացրեցի նոր դասին «Հալոգենաջրածիններ և հալոգենիդներ» թեմային, բացատրեցի նոր դասը,բացատրեցի դասագրքի էջ՝124. 5,6 խնդիրների լուծման սկզբունքները:

3.2.2-Փորձարարական դաս-2

Դասն սկսեցի հարց ու պատասխանով՝ անցած թեմայի վերհիշմամբ: Աշակերտները բավականին ակտիվ մասնակցեցին և պատասխանեցին անցած նյութը, որը բավականին հաջող յուրացրել էին:

Մտուգեցի նրանց գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ, և հանձնարարված տնային աշխատանքները: Տնային աշխատանքները կատարված էին որոշակի սխալներով, որոնք շտկեցինք դասարանում համատեղ աշխատանքի արդյունքում: Այնուհետև օգտագործելով «Տարբերակված ուսուցման» մեթոդով, աշակերտներն սկսեցին պատասխանել օրվա դասը: Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները գրատախտակին գրեցին հալոգենաջրածինների և հալոգենիդների բանաձևերը, լուծեցին թեմայի վերաբերյալ (Ա. Խաչատրյան Քիմիայի ինդրագիրք-2021թ.) խնդիրներ, միջին և ցածր առաջադիմություն ունեցող սովորողների հետ շարունակեցինք աշխատանքը նույն սկզբունքով, թեև դասապրոցեսի ամբողջ ընթացքում իմ ուշադրությունը կենտրոնացրել էի թույլ առաջադիմություն ունեցող աշակերտների վրա, որպեսզի նրանք հնարավորինս հաջող ընկալեն դասանյութը և դասապրոցեսից հետ չընկնեն:

Հաջորդիվ բանավոր կրկնության մեթոդով ամփոփվեց դասը և բացատրեցի նոր թեման «Շղթայական ռեակցիան», որից սովորողները գաղափար ունեին ֆիզիկայի դասից և միջառարկայական կապ ստեղծվեց ֆիզիկայի հետ:

4. Եզրակացություն

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար՝ անցկացվեց 2 տարբերակված դասեր, որի ժամանակ միջին առաջադիմության տեր աշակերտներ կատարեցին անհատական տարբերակված հայտորոշիչ թեստային առաջադրանքներ՝ 2 տարբերակներով: Ամեն հաջորդ տարբերակված դասաժամին ամբողջ դասարանի համար քննարկվեց տարբերակված թեստերի սխալները, տրամադրվեց բանավոր և գրավոր հետադարձ կապ: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում միջին և ցածր առաջադիմության առաջադիմություն ունեցող աշակերտներին, որն էլ պատճառ հանդիսացավ նրանց ներգրավվածությունը դասապրոցեսին, ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց ձեռք բերել ինքնուրույ աշխատելու հմտություն: Աշակերտները խոստովանեցին, որ բանավոր տրամադրված հետադարձ կապը ավելի արդյունավետ է:

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1.տարաբնույթ տարբերակված վարժությունների կատարում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների համար

2.հարցադրումներ և տարբերակված ուսուցում մեթոդների կիրառում դասաժամերին

3.գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում

4.տարբերակված թեստային առաջադրանքների լուծում և քննարկում

5.թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական գրավոր աշխատանքների միջոցով

5. Օգտագործած գրականության ցանկ

1. Բալյան Ա.Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Ե., 1989
2. Էլոյան Տ.Ս., Ուսուցիչը և նրա ստեղծագործունեության հոգեբանական հիմնական ուսումնասիրությունները, Ե., 1980:
3. Հարությունյան Թ.Ս., Ժողովրդական ուսուցիչը, Ե., 2001,
4. Քիմիայի առարկայական չափորոշիչներ, Ե, 2020
5. Քիմիա 10-րդ դասարանի դասագիրք, Ե., 2010

6. Հավելված

Դասապլան-1

Առարկա	Քիմիա	Ամսաթիվ	14. 11. 2021թ	Կիսամյակ	I	Դասարան	X
Թեմա	<p>Հալոգենների քիմիական հատկությունները</p> <p>Ֆտոր, Բրոմ, Իոդ, Ցոն</p> <p>Ուսուցանել Հալոգենածիններ և հալոգենիդներ</p>						
Օգտագործվող նյութեր	<p>Դասագիրք, գրատախտակ, համակարգիչ, հայտորոշիչ թեստ 10-րդ դաս, <<Քիմիա>> գլուխ 5 թեմա 5,3 էջ 120-122, պարբերական համակարգ</p>						
Դասի նպատակը	<p>Իմանալ հալոգենների քիմիական հատկությունների մասին</p> <p>Իմանալ հալոգենների քիմիական բանաձևերը , էլեկտրոնային , էլեկտրոնաբաշխման կառուցվածքը;</p> <p>Գրել հալոգենների և ջրածնի միացությունների բանաձևերը</p> <p>Կատարել քիմիական փորձ , ստեղծել կապ, հալոգենները և կենցաղը հասկացությունների միջև:</p>						
Վերջնարդյունքները	<ul style="list-style-type: none"> • Վերարտադրել սովորած նյութը • Թվարկել հալոգենների անվանումները և հայտնաբերել տարեթիվը , պատմական անվանումները: • Գրել և հավասարացնել հալոգենների և այլ նյութի մասնակցությամբ ընթացող քիմիական ռեակցիաների հավասարումները • Կիրառել ռեակցիաների հավասարումները խնդիրներ լուծելու համար 						

Գործող դթ- յուններ Ժամ/տև ն- դություն ն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով, աշակերտներտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել, կատարել հաշվառումն ստուգել տնային աշխատանքները: Բացատրել անհասկանալի հարցերը, գրատախտակին գրել հալոգենների քիմիական բանաձևը	<ol style="list-style-type: none"> 1. Ո՞րն էր նախորդ դասի թեման 2. Որո՞նք են Cl-ի բնական միացությունները թվարկել 3. Ի՞նչ նշանակություն ունի օրգանիզմի համար յոդը: 4. Ո՞րտեղ է օգտագործվում բրոմը: 	Տարբերակված ուսուցում

10ր	<p>Աշակերտները «Տարբերակված ուսուցման» մեթոդով</p> <p>Խոսեցին ֆտորի, բրոմի և քլորի հատկությունների մասին</p>	<p>Հարցադրումներով պասիվ աշակերտներին ևս ներգրավվել դասապրոցեսին;</p> <p>Թեմային վերաբերող հարցերով ամրապնդել դասը</p>	<p>5 Որոնք են հալոգենների ընդհանուր բնութագիրը և ստացումը</p> <p>6. ինչպես են լաբորատորիայում ստանում քլորը</p>	
10ր	<p>Անհատական հայտորոշիչ թեստի կատարում</p>	<p>Կատարել ճշտումներ և շտկումներ</p> <p>Ուղղորդել</p>	<p>7Քլորի ո՞ր միացությունն է օգտագործվում կենցաղում</p> <p>8. ի ն չ պի ս ի °</p> <p>Ն յ ու թ եր ե ն առ աջ ան ու մ հ ալ ո գ է ն ն եր ի և ջր ած ն ի փոխազդեց ու լ թ յ ու ն ի ց</p>	

15ր	Լուծեցին քիմիական խնդիրներ, գրեցին հալոգենների քիմիական բանաձևերը միջուկի կառուցվածքը	Հետևել աշակերտներին	9 Ո՞րն է ֆտորի բանաձևը և միջուկի կառուցվածքը :	«Տարբերակված ուսուցման» մեթոդ
15ր	Աշակերտները միմյանց օգնելով լուծում էին տրված խնդիրները		Հետադարձ կապ Ի՞նչ օրգանական նյութերի հետ է միացման ռեակցիաներ տալիս բրոմը	
10ր	Լուռ լսեցին նոր դասը, գրեցին գրատախտակի վրա գրվածը Բացեցին դասագիրքը ընթերցեցին նոր դասի տեքստը	Նոր թեմայի հաղորդում	Ի՞նչ քիմիական ռեակցիա է առաջանում հալոգենների և ալկանների միջև	

Դասապլան-2

Առարկա	Քիմիա	Ամսաթիվ	17. 11. 2021թ	Կիսամյակ	I	Դասարան	X
Թեմա	<p>Հալոգենաջրածիններ և հալոգենիտներ</p> <p>Սովորել հալոգենաջրածինների և բանաձևերը Ուսուցանել «Շղթայական ռեակցիաներ»-ը հալոգենիդների</p>						
Օգտագործվող նյութեր	<p>Դասագիրք, գրատախտակ, համակարգիչ, պարբերական համակարգ, դասագիրք , Լ . Սահակյան <<Քիմիա >> 10 Գլ ու խ 5, թեմա 5,4 էջ 123-124</p>						
Դասին նպատակը	<p>Ծանոթանալ հալոգենաջրածիններին և հալոգենիդներին, ֆտորաջրածնական և քլորաջրածնական թթուներին</p> <p>Իմանալ դրանց բանաձևերը</p> <p>Ստեղծել կապ հալոգենաջրածինների ստացման և հատկությունների մասին</p> <p>Հասկանալ և գրել հալոգենաջրածնական թթուների ստացման բանաձևերը և իրենց մասնակցությամբ առաջացած աղերի բանաձևեր : Իմանալ հալոգենաջրածինների ջրային լուծույթները թթուներ են;</p>						
Վերջնարդյունքները	<p>Աշակերտները կկարողանան</p> <ul style="list-style-type: none"> • Տարբերի հալոգենները՝ հալոգենաջրածիններից և հալոգենիտներից • Թվարկեն հալոգենիդների և հալոգենաջրածինների քիմիական անվանումները: • Բացատրեն հալոգենիդները բնության մեջ գտնվելը • Գրեն և անվանեն հալոգենաջրածինների ստացման ռեակցիաները • Հավասարեցնեն ռեակցիաների հավասարումները <p>Օգտագործեն այդ ռեակցիաները խնդիրներ լուծելու համար:</p>						

Գործողութ յուններ Ժամ/տևո ւ րություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով Աշակերտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել դասարանին կատարել հաշվառում Հարցադրումներ կատարել քիմիական փորձ յոդի հայտնաբերման ռեակցիան:	Ո՞րն էր անցած դասի թեման Ինչպիսի՞ կապ է առկա հալոգենաջրածինն երի մոլեկուլներում . որո՞նք են Հալոգենիդների քիմիական հատկությունները	Հարցադրում- ների մեթոդ
15ր	Օգտագործելով «Տարբերակված ուսուցման» մեթոդը աշակերտներն սկսեցին ակտիվ ներկայացնել հանձնարարված նյութը Համեմատականներ անցկանցնել անցածի և նորի միջև, կարծիքներ հայտնեցին Ծանոթացան հալոգենիդների և հալոգենաջրածինն	Խրախուսել և գովեստի խոսքերով բարձրացնել աշակերտների մոտիվացիան, հետաքրքրու- թյունն ու շահագրգռվածու թյունը Աշակերտներին ներգրավվել դասապրոցեսին	. Ո՞րն է քլորաջրածնական թթվի տեխնիկական անունը . Ինչպիսի փոխազդեցություն է տեղի ունենում պակու և Ֆտորաջրածնական թթվի միջև . Որոնք են հալոգենիդները	«Տարբերակվ ած ուսուցման» մեթոդ

